

<b>Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) հաշվարկ</b>	<b>Փաստաթղթի հերթական համարը</b> <hr/> (լրացվում է հարկային մարմնի կողմից)							
	1. Հարկ վճարողի հաշվառման համարը							
2. Հաշվետու ժամանակաշրջանը	Տարի					Եռամսյակ		
3. Իրավաբանական անձի անվանումը								
4. Գտնվելու վայրը								
5. Հեռախոսահամարը								
6. Ներկայացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը								
	Չափի միավորը				Հազար դրամ			

Մասհանումների տեսակները	Ա. Հասույթը (եկամուտը)	Բ. Մասհանման դրույթաչափը, (%)	Գ. Մասհանման գումարը
7. Մասհանումներից ազատված գործարքներից		X	X
8. Ավտոտրանսպորտային ծառայությունների մատուցումից		2	
9. Հանքարդյունահանման գործունեությունից		0.5	
10. Գործունեության մյուս տեսակներից (արտադրանքի, ապրանքների իրացումից և կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների դիմաց ստացված հասույթից)		0.2	
11. Ընդամենը		X	

Կազմակերպության տնօրեն

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

Հաշվապահ

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

**Կ.Տ.**

*Հաշվարկը լրացվում է երկու օրինակից, որոնք ներկայացվում են հարկային մարմին: Հաշվարկը արձեռն հարկային մարմին ներկայացնելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից զրանցվելուց հետո մեկ օրինակը հանձնվում է հարկ վճարողին:*

## Կ Ա Ր Գ

### ԱՎՏՈՆՈՐՔԻՆԱՅԻՆ ՃԱՆԱԿԱՐԻՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ (ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ) ՀԱՇՎԱՐԿԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) (այսուհետ՝ մասհանում) հաշվարկը (այսուհետ՝ հաշվարկ) լրացվում է հազար դրամներով՝ ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ:

2. Հաշվարկի վերևի աջ վանդակը լրացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմնի կողմից:

3. Հաշվարկի 1-ին տողում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն): 4. Հաշվարկի 2-րդ տողում լրացվում է այն հաշվետու կամ ճշգրտման ժամանակաշրջանը, որի համար ներկայացվում է հաշվարկը:

5. Հաշվարկի 3-րդ տողում նշվում է իրավաբանական անձի լրիվ անվանումը:

6. Հաշվարկի 4-րդ և 5-րդ տողերում լրացվում են համապատասխանաբար մասհանումներ կատարող իրավաբանական անձի գտնվելու վայրը և աշխատանքային հեռախոսի համարը:

7. Հաշվարկի 6-րդ տողում լրացվում է հաշվարկի ներկայացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը: Փոստով հաշվարկը ներկայացնելու դեպքում, անկախ հաշվարկում նշված ամսաթվից, հաշվարկի ներկայացման ամսաթիվ է համարվում փոստային բաժանմունքի ընդունման օրվա օրացուցային կնիքի արտատիպը: Հաշվարկը առձեռն ներկայացվելու դեպքում ներկայացման օր է համարվում հաշվարկը հարկային մարմին հանձնելու օրը:

8. Հաշվարկի 7-րդ տողի «Ա» սյունակում լրացվում է «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ մասհանումներից ազատված գործարքների գծով իրացման շրջանառությունը: Հաշվարկի «X» նշումով տողերը չեն լրացվում:

9. Հաշվարկի 8-րդ տողի «Ա» սյունակում լրացվում է մասհանումների 2 % դրույքաչափով հաշվարկվող՝ ավտոտրանսպորտային ծառայությունների մատուցումից ստացած հասույթը (հաշվեգրման եղանակով հաշվարկված), իսկ 8-րդ տողի «Գ» սյունակում՝ այդ շրջանառության նկատմամբ հաշվարկված մասհանման գումարը:

10. Հաշվարկի 9-րդ տողի «Ա» սյունակում լրացվում է մասհանումների 0.5 % դրույքաչափով հաշվարկվող՝ հանքարդյունահանման ստացած հասույթը (հաշվեգրման եղանակով հաշվարկված), իսկ 9-րդ տողի «Գ» սյունակում՝ այդ շրջանառության նկատմամբ հաշվարկված մասհանման գումարը:

11. Հաշվարկի 10-րդ տողի «Ա» սյունակում լրացվում է մասհանումների 0.2 % դրույքաչափով հաշվարկվող՝ գործունեության մյուս տեսակների գծով (արտադրանքի (ապրանքների) իրացումից, աշխատանքների, այլ ծառայությունների մատուցումից) ստացած հասույթը (հաշվեգրման եղանակով հաշվարկված), իսկ 10-րդ տողի «Գ» սյունակում՝ այդ շրջանառության նկատմամբ հաշվարկված մասհանման գումարը:

12. Հաշվարկի 11-րդ տողի «Ա» սյունակում լրացվում է 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ տողերի «Ա» սյունակում նշված թվերի հանրագումարը, իսկ 11-րդ տողի «Գ» սյունակում՝ 8-րդ, 9-րդ և 10-րդ տողերի «Գ» սյունակում նշված թվերի հանրագումարը: